# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հուլիսի 2021 թվականի N 29-Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 12-ի N 7 հերթական նիստի օրակարգը.

1. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին
2. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ղեկավարի հաղորդումը համայնքի 2021 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի ընթացքի մասին
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները սահմանելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի վարչական տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները սահմանելու մասին
5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2021 թվականի ապրիլի 6-ի N 21 որոշման մեջ լրացում կատարելու մասին
6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2021 թվականի հունվարի 11-ի N 3 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
7. Գումար հատկացնելու մասին
8. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2020 թվականի դեկտեմբերի 18-ի N 47-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՂԱՍԻ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻԿ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հուլիսի 2021 թվականի N 30-Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N 656 որոշման՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հողային հաշվեկշռին՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Կողմ -5** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՂԱՍԻ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻԿ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի
N 30-Ա ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հողային ֆոնդի առկայության և բաշխման

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների, առ 01/07/2021թ.)

Մարզ: Կոտայք (անվանում) — 7 (Կոդ)

Համայնք: Նոր Արտամետ (անվանում) — 573 (Կոդ)

*(հեկտարներով)*

| NN | Նպատակային նշանակություն | Հողատեսք, գործառնական նշանակություն | Կոդի NN | Ընդամենը Σ2+3+4+8+12 | ՀՀ քաղաքացիների | ՀՀ իրավաբանական անձանց | Համայնքային: ընդամենը (5+6+7) | Համայնքային: մշտական օգտագործման տրված | Համայնքային: վարձակալության տրված | Համայնքային: չտրամադրված և այլ օգտագործման տրված | Պետական: ընդամենը (9+10+11) | Պետական: մշտական օգտագործման տրված | Պետական: վարձակալության տրված | Պետական: չտրամադրված և այլ օգտագործման տրված | Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1.1 | 1. Գյուղատնտեսական նշանակության | վարելահող | | 59.14 | 34.03 | 2.12 | 12.62 | | 5.38 | 7.24 | 10.37 | | | 10.37 | |
| 1.2 | | բազմ. տնկարկներ, | | 91.82 | 91.82 | | | | | | | | | | |
| 1.2.1 | | այդ թվում[a] | | 91.82 | 91.82 | | | | | | | | | | |
| 1.2.2 | | խաղողի այգի | | | | | | | | | | | | | |
| 1.2.3 | | այլ բազմամյա | | | | | | | | | | | | | |
| 1.3 | | խոտհարք | | | | | | | | | | | | | |
| 1.4 | | արոտ | | | | | | | | | | | | | |
| 1.5 | | այլ հողատեսքեր | | 73.96 | 73.96 | | | | | | | | | | |
| 1 | | Ընդամենը | | 224.92 | 199.81 | 2.12 | 12.62 | | 5.38 | 7.24 | 10.37 | | | 10.37 | |
| 2.1 | 2 Բնակավայրերի | բնակելի | | 70.38 | 69.60 | | 0.48 | | | 0.48 | | | | | 0.30 |
| 2.1.1 | | այդ թվում[a] | | 56.89 | 56.59 | | | | | | | | | | 0.30 |
| 2.1.2 | | այգեգործական (ա | | | | | | | | | | | | | |
| 2.2 | | հասարակական | | 0.68 | 0.29 | | 0.03 | | | 0.03 | 0.36 | | | 0.36 | |
| 2.3 | | խառը | | 0.01 | | | 0.01 | | | 0.01 | | | | | |
| 2.4 | | ընդհանուր | | 10.12 | | | 10.12 | | | 10.12 | | | | | |
| 2.5 | | այլ հողեր | | 14.98 | | | 14.98 | | | 14.98 | | | | | |
| 2 | | Ընդամենը | | 96.17 | 69.89 | | 25.62 | | | 25.62 | 0.36 | | | 0.36 | 0.30 |
| 3.1 | 3. Արդյունաբ., ընդերքօգտ. | արդյունաբերության | | | | | | | | | | | | | |
| 3.2 | | գյուղատնտեսական, | | 15.46 | 5.24 | | | | | | 10.22 | | 4.11 | 6.11 | |
| 3.3 | | պահեստարանների | | | | | | | | | | | | | |
| 3.4 | | ընդերք | | | | | | | | | | | | | |
| 3 | | Ընդամենը | | 15.46 | 5.24 | | | | | | 10.22 | | 4.11 | 6.11 | |
| 4.1 | 4 Էներգետիկայի, կապի, տրանսպորտի | էներգետիկայի | | 0.03 | | 0.02 | 0.01 | | | 0.01 | | | | | |
| 4.2 | | կապի | | | | | | | | | | | | | |
| 4.3 | | տրանսպորտի | | 2.49 | | | | | | | 2.49 | | | 2.49 | |
| 4.4 | | կոմունալ | | 0.21 | | | 0.21 | | | 0.21 | | | | | |
| 4 | | Ընդամենը | | 2.73 | | 0.02 | 0.22 | | | 0.22 | 2.49 | | | 2.49 | |
| 5.1 | 5. Հատուկ պահպանվող տարածքների | բնապահպանական | | | | | | | | | | | | | |
| 5.1.1 | | այդ թվում[a] արգելոցն | | | | | | | | | | | | | |
| 5.1.2 | | | | | | | | | | | | | | | |
| 5.1.3 | | ազգային | | | | | | | | | | | | | |
| 5.2 | | առողջարարական | | | | | | | | | | | | | |
| 5.3 | | հանգստի | | | | | | | | | | | | | |
| 5.4 | | պատմական և | | 1.23 | | | 1.23 | | | 1.23 | | | | | |
| 5 | | Ընդամենը | | 1.23 | | | 1.23 | | | 1.23 | | | | | |
| 6 | 6 Հատուկ նշանակության | Ընդամենը | | 136.04 | | | | | | | 136.04 | 2.87 | | 133.17 | |
| 7.1 | 7. Անտառային | անտառ | | 7.20 | | | | | | | 7.20 | | | 7.20 | |
| 7.2 | | թփուտ | | 24.97 | | | | | | | 24.97 | | | 24.97 | |
| 7.3 | | վարելահող | | | | | | | | | | | | | |
| 7.4 | | խոտհարք | | | | | | | | | | | | | |
| 7.5 | | արոտ | | 65.01 | | | | | | | 65.01 | | | 65.01 | |
| 7.6 | | այլ հողեր | | 28.06 | | | | | | | 28.06 | | | 28.06 | |
| 7 | | Ընդամենը | | 125.24 | | | | | | | 125.24 | | | 125.24 | |
| 8.1 | 8. Ջրային | գետեր | | | | | | | | | | | | | |
| 8.2 | | ջրամբարներ | | | | | | | | | | | | | |
| 8.3 | | լճեր | | | | | | | | | | | | | |
| 8.4 | | ջրանցքներ | | 1.21 | | | | | | | 1.21 | | | 1.21 | |
| 8.5 | | հիդրոտեխ. և | | | | | | | | | | | | | |
| 8 | | Ընդամենը | | 1.21 | | | | | | | 1.21 | | | 1.21 | |
| 9.1 | 9. Պահուստային | աղուտներ | | | | | | | | | | | | | |
| 9.2 | | ավազուտներ | | | | | | | | | | | | | |
| 9.3 | | ճահիճներ | | | | | | | | | | | | | |
| 9.4 | | | | | | | | | | | | | | | |
| 9.5 | | այլ անօգտագործելի | | | | | | | | | | | | | |
| 9 | | Ընդամենը | | | | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ | | | | 603.00 | 274.94 | 2.14 | 39.69 | | 5.38 | 34.31 | 285.93 | 2.87 | 4.11 | 278.95 | 0.30 |

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ոռոգվող հողերի առկայության և բաշխման

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի եւ սեփականության սուբյեկտների)

| | | |
|---|---|---|
| Մարզ՝ | Կոտայք | 7 |
| | (անվանումը) | (կոդ) |
| Համայնք՝ | Նոր Արտամետ | 573 |
| | (անվանումը) | (կոդ) |

| NN | Նպատակային նշանակություն | Գործառնական նշանակություն, հողատեսք | կոդ N/N | Ընդամենը ոռոգվող հողեր (2+3+4+5+6) | Սեփականության սուբյեկտ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ՀՀ քաղաքացիների | ՀՀ իրավաբանական անձանց | համայնքային | պետական | Օտարերկրյա պետությունների, միջ. կազմ., կազմակերպությունների |
| | Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1.1 | 1. Գյուղատնտեսական | վարելահող | | | | | | | |
| 1.2 | | բազմամյա տնկարկներ, ընդամենը | | 91.8 | 91.8 | | 0.0 | | |
| 1.2.1 | | այդ թվում՝ պտղատու այգի | | 91.8 | 91.8 | | 0.0 | | |
| 1.2.2 | | խաղողի այգի | | | | | | | |
| 1.2.3 | | այլ | | | | | | | |
| 1.3 | | խոտհարք | | | | | | | |
| 1.4 | | արոտ | | | | | | | |
| 1.5 | | այլ հողատեսքեր | | | | | | | |
| 1 | | Ընդամենը (1.1+1.2+1.3+1.4+1.5) | | 91.8 | 91.8 | | 0.0 | | |
| 2.1 | 2. Բնակավայրերի | բնակելի կառուցապատման | | 50.0 | 50.0 | | | | |
| 2.1.1 | | այդ թվում տնամերձ հողեր | | 50.0 | 50.0 | | | | |
| 2.1.2 | | այգեգործական (ամառանոցային) | | | | | | | |
| 2.2 | | ընդհանուր օգտագործման | | | | | | | |
| 2.3 | | այլ հողեր | | | | | | | |
| 2 | | Ընդամենը (2.1+2.2+2.3) | | 50.0 | 50.0 | | | | |
| 3 | 3. Արդյունաբ., ընդերքօգտ., և այլ արտ. նշանակության | | | | | | | | |
| 4 | 4. Էներգետիկայի, տրանսպ., կապի, կոմունալ ենթակառուցվածքների | | | | | | | | |
| 5 | 5. Հատուկ պահպանվող տարածքների | | | | | | | | |
| 6 | 6. Հատուկ նշանակության | | | | | | | | |
| 7.1 | 7. Անտառային | անտառ | | | | | | | |
| 7.2 | | թփուտ | | | | | | | |
| 7.3 | | վարելահող | | | | | | | |
| 7.4 | | խոտհարք | | | | | | | |
| 7.5 | | արոտ | | | | | | | |
| 7.6 | | այլ հողեր | | | | | | | |
| 7 | | Ընդամենը (3.1+3.2+3.3+3.4+3.5+3.6) | | | | | | | |
| 8 | 8. Ջրային | | | | | | | | |
| 9 | 9. Պահուստային | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՈՌՈԳՎՈՂ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+9) | | | | 141.8 | 141.8 | | 0.0 | | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հուլիսի 2021 թվականի N 31-Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածների պահանջների՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ի գիտություն ընդունել համայնքի ղեկավարի հաղորդումը համայնքի 2021 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

**Կողմ -5** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՂԱՍԻ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻԿ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2021 թվականի N 32-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ (ՀՐԱԺԵՇՏԻ) ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սահմանել Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Կողմ -5** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՂԱՍԻ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻՔ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի N 32-Ա ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ (ՀՐԱԺԵՇՏԻ) ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին (այսուհետ՝ քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահ) ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները:
2. Քաղաքացիական հոգեհանգստի ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվությունը տալիս է Նոր Արտամետ համայնքի ղեկավարը՝ ընթացիկ տարվա տեղական տուրքի վճարման անդորրագրի հիման վրա, եթե քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը թույլտվության տրամադրման պահին (ինչպես առաջին, այնպես էլ հաջորդ անգամ) համապատասխանում է սույն հավելվածով սահմանված սահմանափակումներին, պահանջներին և պայմաններին:
3. Առանց թույլտվության քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացումը և (կամ) մատուցումը առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվություն:

## II. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍՐԱՀՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները կարող են գտնվել՝
   1) ուսումնական, կրթական, մշակութային, առողջապահական, մարզական և սոցիալական կազմակերպություններից, հիմնարկներից, հաստատություններից, հյուրանոցներից, բազմաբնակարան շենքերից, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների վարչական շենքերից, զբոսայգիներից, այգիներից, պուրակներից, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերից, հանրային սննդի օբյեկտներից նվազագույնը 100 մետր, իսկ անհատական բնակելի տներից նվազագույնը 70 մետր հեռավորության վրա բացառությամբ, եթե դրանք գտնվելու են՝

   ա. գերեզմանատներին կից՝ գերեզմանատների զբաղեցված հողամասի սահմանից մինչև 50 մետր հեռավորության վրա,

   բ. միայն անհատական բնակելի տներից և(կամ) հանրային սննդի օբյեկտներից մինչև սույն կետի առաջին ենթակետում նշված հեռավորությունների վրա և առկա է դրանց սեփականատերերի գրավոր համաձայնությունը:
5. Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները պետք է բավարարեն հետևյալ պահանջներին և պայմաններին՝
   1) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները պետք է ունենան՝

   ա. նախասրահ՝ հանդերձարանով,

   բ. հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակ,

   գ. շուրջօրյա աշխատանքային ռեժիմով դիակների պահման համար առանձնացված վայր (տարածք),

դ. սանհանգույց (առնվազն 2 հատ, որից մեկը պետք է մատչելի լինի տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար),
ե. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված առաջին բժշկական օգնության համար անհրաժեշտ դեղորայքով և կահավորմամբ սենյակ,
զ. հուղարկավորությունը ստանձնողների ընդունման համար նախատեսված առանձին մուտքով գրասենյակային տարածք:

2) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը պետք է մատչելի լինի տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց համար՝ առնվազն մինչև հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակ, զուգարան և առաջին բժշկական օգնության սենյակ մուտք գործելու համար,
3) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահում հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված երկու և ավելի սենյակի առկայության դեպքում յուրաքանչյուրը պետք է ունենա առանձին մուտք, նախասրահ, սանհանգույցներ,
4) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահով զբաղեցված և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողատարածքը՝ ներառյալ սույն կետի 6-րդ ենթակետով նախատեսված տարածքը պետք է ունենա առնվազն երկու մետր բարձրությամբ անթափանց նյութերով կառուցված ցանկապատ կամ պարիսպ:
Ընդ որում քաղաքացիական հոգեհանգստի իրականացման ծառայությունները իրականացվում և (կամ) մատուցվում են միայն սրահի ցանկապատված տարածքում այնպես, որ սրահի տարածքից դուրս գտնվող անձանց համար սգո պարագաները, այդ թվում՝ ծաղիկները և ծաղկեպսակները տեսանելի չլինեն՝ բացառությամբ ավտոկայանատեղիի:
5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 19-ի N 270 որոշման պահանջներին համապատասխան և հասցեի նշմամբ ցուցանակներ, ընդ որում ցուցանակները պետք է լինեն լուսավորված:
6) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահի տարածքը պետք է ունենա յուրաքանչյուր հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված մեկ սենյակի հաշվարկով առնվազն 20 ավտոմեքենայի համար նախատեսված կայանատեղ,
7) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահին կից պետք է լինի հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված մեկ սենյակի հաշվարկով առնվազն 100 քառակուսի մետր մակերեսով տարածք՝ քաղաքացիական հոգեհանգստի արարողությանը մասնակցող անձանց գտնվելու համար՝ ապահովված աղբամաններով, լուսավորությամբ և ծխելու համար նախատեսված (առանձնացված) հատվածով,
8) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը պետք է ունենա ջեռուցման, հովացման, օդափոխության, իսկ հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակում նաև երաժշտության ձայնային համակարգեր,
9) քաղաքացիական հոգեհանգստի սրահը շահագործողը պետք է ունենա բժշկի որակավորում ունեցող աշխատակից կամ համապատասխան պայմանագիր բժշկական հաստատությունների հետ՝ քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման ողջ ժամանակահատվածում բժշկի ներկայությունը ապահովելու համար՝ անհրաժեշտության դեպքում առաջին բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով,
10) քաղաքացիական հոգեհանգստի սրահի շահագործողը քաղաքացիական հոգեհանգստի սրահում ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման ընթացքում պետք է ապահովի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված քաղաքաշինական, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ (սանիտարահամաճարակաբանական) նորմերի ու կանոնների պահպանումը:

6. Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը կարող է ունենալ նաև հոգևորականի համար նախատեսված սենյակ, ինչպես նաև առանձին մուտքով ծաղիկների և սգո պարագաների վաճառքի սրահ, որի ցուցափեղկերը և մուտքերը պարտադիր պետք է լինեն վարագուրապատված կամ մգավորված ապակիներով այնպես, որ վաճառվող ապրանքների նմուշները դրսից տեսանելի չլինեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հուլիսի 2021 թվականի N 33-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ (ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.2-րդ կետով, «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.3-րդ հոդվածի 3-րդ մասով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի վարչական տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող հետևյալ պահանջները.
   1) Արգելել սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայումը բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքում, ինչպես նաև կրթական և պատմամշակութային հաստատությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի, բժշկական հաստատությունների տարածքներում:
   2) Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները կարող են գտնվել անհատական բնակելի տներից նվազագույնը 100 մետր հեռավորության վրա:
   3) Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները կարող են գտնվել սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված անհատական բնակելի տներից մինչև 100 մետր հեռավորության վրա, եթե առկա է դրանց սեփականատերերի գրավոր համաձայնությունը:
   4) Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտներին գործունեության թույլտվությունը տալիս է Նոր Արտամետ համայնքի ղեկավարը՝ օրացուցային տարվա համար՝ տեղական տուրքի վճարման անդորրագրի հիման վրա:
   5) Առանց թույլտվության սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների գործունեության իրականացումը առաջացնում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՂԱՍԻ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻԿ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հուլիսի 2021 թվականի N 34-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 6-Ի N 21 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2021 թվականի ապրիլի 6-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին» N 21 որոշման նախաբանը «8-րդ կետի» բառերից հետո լրացնել «, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման պահանջների» բառերով:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Կողմ -5** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՂԱՍԻ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻԿ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հուլիսի 2021 թվականի N 35-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի N 3 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2021 թվականի հունվարի 11-ի «Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N 3 որոշման հավելվածի Ձև Գ-4-ը և Ձև Գ-24-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Կողմ -5** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՂԱՍԻ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻԿ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի N 35-Ա ՈՐՈՇՄԱՆ

Ձև Գ-4

Նոր Արտամետի համայնքապետարան
կազմակերպության անվանումը

**Հիմնական միջոցների գույքագրման ցուցակ N 01**

Ստորաբաժանման անվանումը ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Գույքագրման անցկացման հրամանի համար և ամսաթիվը N 10 27.10.2020

Գույքագրումն սկսելու ամսաթիվը 01.11.2020 Գույքագրումն ավարտելու ամսաթիվը 30.12.2020

**Հավաստում**

Գույքագրման սկզբում հիմնական միջոցների մուտքի և ելքի բոլոր փաստաթղթերը հանձնված են հաշվապահություն: Իմ (մեր) պատասխանատվությամբ ստացված բոլոր հիմնական միջոցները մուտքագրված են, իսկ բացթողնվածները՝ ելքագրված:

Նյութական պատասխանատու անձ (անձինք)

Աշխատակազմի քարտուղար ______ (ստորագրություն) Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

Առաջատար մասնագետ ______ (ստորագրություն) Տ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Առաջին կարգի մասնագետ՝ ______ (ստորագրություն) Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Առաջին կարգի մասնագետ՝ ______ (ստորագրություն) Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

| հ/հ | Հիմնական միջոցի անվանումը և համառոտ բնութագիրը | Թողարկման (կառուցման) տարեթիվը | Ձեռքբերման տարեթիվը | Համարը | | Առկայությունը | | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | գույքային | գործարանային | փաստացի (քանակ) | հաշվապահ. տվյալներով (քանակ) | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | Շենքեր | | | | | | | |
| 1 | Հանդիսությունների սրահ | | 2013 | 5 | | 1 | 1 | |
| | Շինություններ | | | | | | | |
| 2 | Կենտրոնական ճանապարհ | | 2003 | 8 | | 1 | 1 | |
| 3 | Ճանապարհ գին պահեստ | | 2003 | 9 | | 1 | 1 | |
| 4 | Ճանապարհ կենտրոնական բազա | | 2003 | 10 | | 1 | 1 | |
| 5 | ՇինությունMRL -2ի համար | | 2003 | 4 | | 1 | 1 | |
| 6 | Էլ. ենթակայան | | 2003 | 11 | | 1 | 1 | |
| 7 | Էլ ենթակայան 0.4 ԿՎԱ ցանց | | 2003 | 12 | | 1 | 1 | |
| 8 | Ներհամայնքային ճանապարհ | 2011 | 2011 | 13 | | 4 | 4 | |
| 9 | Ներհամայնքային ճանապարհ | 2012 | 2012 | 14 | | 1 | 1 | |
| 10 | Գերեզմանոցի պարիսպ | 2012 | 2012 | 15 | | 1 | 1 | |
| 11 | Ներհամայնքային ճանապարհ | 2014 | 2014 | 16 | | 3 | 3 | |
| 12 | Ներհամայնքային ճանապարհ | 2016 | 2016 | 17 | | 2 | 2 | |
| 13 | Ներհամայնքային ճանապարհ | 2018 | 2018 | 18 | | 1 | 1 | |
| 14 | Ներհամայնքային ճանապարհ | 2019 | 2019 | 19 | | 1 | 1 | |
| | Փոխանցող հարմարանքներ | | | | | | | |
| 15 | Օդային էլ. Գիծ | | | 1 | | 1 | 1 | |
| 16 | Բարձր լարման էլ. Գիծ | | | 2 | | 1 | 1 | |
| 17 | Ցածր լարման էլ. Գիծ | | | 3 | | 1 | 1 | |
| 18 | Ֆիլտրային հորեր | | | 4 | | 1 | 1 | |
| 19 | Արտաքին լուսավորություն | 2011 | 2011 | 6 | | 1 | 1 | |
| 20 | Արտաքին լուսավորություն | 2019 | 2019 | 7 | | 1 | 1 | |
| 21 | Արտաքին լուսավորություն | 2020 | 2020 | 8 | | 1 | 1 | |
| | Կահույք | | | | | | | |
| 22 | Գրապահարան | | | 2 | | 2 | 2 | |
| 23 | Գրապահարան 5 դարակ | | | 3 | | 1 | 1 | |
| 24 | Ցուցատախտակ | | | 4 | | 1 | 1 | |
| 25 | Գրասեղան | | 2008 | 5 | | 1 | 1 | |
| 26 | Սեղան դիմադիր | | 2008 | 6 | | 1 | 1 | |
| 27 | Հեռախոսի տակդիր | | 2008 | 7 | | 1 | 1 | |
| 28 | Աթոռ փափուկ | | 2008 | 9 | | 12 | 12 | |
| 29 | Խորհրդակցության սեղան | | 2008 | 8 | | 1 | 1 | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 30 | Համակարգչի սեղան | | 2008 | 10 | | 2 | 2 | |
| 31 | Չիրկիզվող պահարան | | | 1 | | 2 | 2 | |
| 32 | Գրասեղան 1.2 | | 2011 | 14 | | 1 | 1 | |
| 33 | Գրասեղան 1.1 | | 2011 | 15 | | 1 | 1 | |
| 34 | Աթոռ պտտվող | | 2010 | 11 | | 2 | 2 | |
| 35 | Հեռուստացույցի կանգնակ | | 2010 | 12 | | 1 | 1 | |
| 36 | Հատակի ծածկոց | | 2010 | 13 | | 1 | 1 | |
| 37 | Գրասեղան | | 2014 | 16 | | 1 | 1 | |
| 38 | Գրապահարան | | 2014 | 17 | | 2 | 2 | |
| | Համակարգչային տեխնիկա | | | | | | | |
| 39 | Համակարգիչ | | 2008 | 7 | | 1 | 1 | անսարք |
| 40 | Համակարգիչ Qore 2Q8400 | | 2011 | 9 | | 1 | 1 | |
| 41 | Համակարգիչ Intel DC5700 | | 2012 | 12 | 3128C292-8A2341 | 1 | 1 | |
| 42 | Համակարգիչ Intel Core I32100 | | 2012 | 13 | 3103C596-0397 | 1 | 1 | |
| 43 | Համակարգիչ DC 5700 | | 2012 | 14 | Q138B896-7A0502 | 1 | 1 | |
| 44 | Մոնիտոր | | 2007 | 5 | | 1 | 1 | անսարք |
| 45 | Մոնիտոր Samsung | | 2008 | 8 | | 1 | 1 | անսարք |
| 46 | Մոնիտոր Samsung B2030 | | 2011 | 10 | LS20PUZKFV/XT | 1 | 1 | |
| 47 | Մոնիտոր samsung 20A300 | | 2012 | 15 | ZSKBH9LBB06350 | 1 | 1 | անսարք |
| 48 | Մոնիտոր LG 20 | | 2016 | 16 | | 1 | 1 | անսարք |
| 49 | Մոնիտոր ASUS 22VP228DE | | 2018 | 17 | WRD80639 | 1 | 1 | |
| 50 | Xerox faser3117 | | 2007 | 4 | | 1 | 1 | |
| 51 | Տպիչ սարք Canon 4010 | | 2008 | 9 | | 1 | 1 | |
| 52 | Պրինտեր Xerox 3100 MFP /S | | 2012 | 16 | 2807622091 | 1 | 1 | անսարք |
| 53 | Պրինտեր Canon MF3010 | | 2015 | | 5252BOO4WCY45494 | 1 | 1 | |
| 54 | Տպիչ Canon MF232W | | 2018 | 1 | HGLMTF077282 | 1 | 1 | |
| 55 | Ցանցային կոնցենտրատոր TPLINK | | 2012 | 17 | TL-WR740N/TL-WR741ND | 1 | 1 | |
| 56 | Անխափան սնուցման սարք 650VA | | 2015 | 20 | | 1 | 1 | |
| 57 | Անխափան սնուցման սարք 850VA | | 2015 | 21 | | 1 | 1 | անսարք |
| 58 | Անխափան սնուցման սարք 850VA | | 2015 | 22 | | 1 | 1 | |
| 59 | Անխափան սնուցման սարք 850VA | | 2015 | 23 | 150514E0850N00975 | 2 | 2 | |
| 60 | Հեռուստացույց | 2015 | 2015 | 24 | MBM64176659 (1504-REVOO-FX) | 1 | 1 | |
| 61 | Տեսահսկման համակարգ | | 2014 | 19 | | 1 | 1 | |
| 62 | Համակարգիչ | 2019 | 2020 | 25 | E15469 | 1 | 1 | |
| 63 | Մոնիտոր | | 2020 | 26 | 001NTWGB7713 | 1 | 1 | |
| 64 | Բարձրախոս | | 2020 | 27 | UG1905131448 | 2 | 2 | |
| 65 | Համակարգիչ | 2021 | 2021 | 28 | | 1 | 1 | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 66 | Անխափան սնուցման սարք 1500VA | | 2021 | 29 | | 1 | 1 | |
| 67 | Անխափան սնուցման սարք 650VA | | 2021 | 30 | | 2 | 2 | |
| 68 | Տեսահսկման համակարգ | | 2021 | 31 | | 1 | 1 | |
| | Այլ հիմնական միջոցներ | | | | | | | |
| 69 | Էլ Տաքացուցիչ | | 2011 | 2 | | 1 | 1 | |
| 70 | Էլ Տաքացուցիչ | | 2011 | 3 | | 1 | 1 | անսարք |
| 71 | Կախիչ LEOSTER | | 2015 | 4 | MBM64176659 (1504-REVOO-FX) | 1 | 1 | |
| 72 | Էլ Տաքացուցիչ 2000W | | 2016 | 5 | 26453 | 2 | 2 | անսարք |
| 73 | Էլ տաքացուցիչ SAACHI NLON1715 | | 2018 | 6 | | 3 | 3 | անսարք |
| 74 | Գոտեվորման սխեմա | | | 1 | | 1 | 1 | |
| 75 | Պարզեցված գլխավոր հատակագիծ | | 2016 | 6 | | 1 | 1 | |
| 76 | Տոնածառ | | 2016 | 7 | | 1 | 1 | |
| 77 | Հոսանքի կարգավորիչ 20000VA | | 2020 | 8 | 85L17 GB/T7676-98 | 1 | 1 | |
| 78 | Հոսանքի կարգավորիչ 7500 VA | | 2020 | 9 | | 1 | 1 | |
| 79 | Օդակարգավորիչ | | 2020 | 10 | 28935 | 1 | 1 | |
| 80 | Շչակ C-40C | | 2020 | 11 | 2022 | 1 | 1 | |
| 81 | Ճանապարհային նշաններ | | 2020 | 12 | | 22 | 22 | |
| | Տրանսպորտային սարքավորումներ | | | | | | | |
| 82 | HUNDAI ACCENT 1.4 A/T | 2017 | 2017 | 1 | Z94K241BBJR032670 | 1 | 1 | |
| | | | | | Ընդամենը | 131 | 131 | |

Ընդամենը ցուցակով.

հերթական համարների քանակը — Ութսուներկու (տառերով)

միավորների ընդհանուր քանակ — Մեկ հարյուր երեսունմեկ (տառերով)

Հանձնաժողովի նախագահ՝ Աշխատակազմի քարտուղար _______ (ստորագրություն) Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

Հանձնաժողովի անդամներ՝

Ավագանու անդամ _______ (ստորագրություն) Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Առաջատար մասնագետ _______ (ստորագրություն) Տ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Առաջին կարգի մասնագետ՝ _______ (ստորագրություն) Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Առաջին կարգի մասնագետ՝ ______________________ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
(ստորագրություն)

Գույքագրման ցուցակում N 01 ից մինչև N82- ը թվարկված բոլոր հիմնական միջոցների փաստացի առկայությունը ստուգված և ցուցակում գրանցված է իմ (մեր) ներկայությամբ, որի հետ կապված գույքագրման հանձնաժողովի նկատմամբ ոչ մի բողոք չունեմ (չունենք): Ցուցակում նշված հիմնական միջոցները գտնվում են իմ (մեր) պատասխանատու պահպանության ներքո:

Նյութական պատասխանատու անձինք

Աշխատակազմի քարտուղար ______________________ Ա. ԶԱՔԱՐՅԱՆ
(ստորագրություն)

Առաջատար մասնագետ ______________________ Տ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(ստորագրություն)

Առաջին կարգի մասնագետ՝ ______________________ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
(ստորագրություն)

Առաջին կարգի մասնագետ՝ ______________________ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
(ստորագրություն)

Ցուցակում նշված տվյալները և հաշվարկները ստուգեց

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ ______________________ Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
(ստորագրություն)

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի N 35-Ա ՈՐՈՇՄԱՆ

Ձև Գ-24

Նոր Արտամետի համայնքապետարան

կազմակերպության անվանումը

## Հիմնական միջոցների գույքագրման արդյունքների համեմատական տեղեկագիր N 01

Ստորաբաժանման անվանումը ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Գույքագրման անցկացման հրամանի համար և ամսաթիվը N 10 27.10.2020

Գույքագրումն սկսելու ամսաթիվը 01.11.2020 Գույքագրումն ավարտելու ամսաթիվը 30.12.2020

| h/h | Հիմնական միջոցի անվանումը և համառոտ բնութագիրը | Թողարկման (կառուցման) տարեթիվը | Համարը | | Գույքագրման արդյունքները | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | գույքային | գործարանային | պակասորդ (քանակ) | ավելցուկ (քանակ) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | Շենքեր | | | | | |
| 1 | Հանդիսությունների սրահ | 2013 | 5 | | 0 | 0 |
| | Շիություններ | | | | | |
| 2 | ՇինությունMRL -2ի համար | | 4 | | 0 | 0 |
| 3 | Կենտրոնական ճանապարհ | | 8 | | 0 | 0 |
| 4 | Ճանապարհ գին պահեստ | | 9 | | 0 | 0 |
| 5 | Ճանապարհ կենտրոնական բազա | | 10 | | 0 | 0 |
| 6 | Էլ. Ենթակայան | | 11 | | 0 | 0 |
| 7 | Էլ ենթակայան 0.4 ԿՎԱ ցանց | | 12 | | 0 | 0 |
| 8 | Ներհամայնքային ճանապարհ | 2011 | 13 | | 0 | 0 |
| 9 | Ներհամայնքային ճանապարհ | 2012 | 14 | | 0 | 0 |
| 10 | Գերեզմանոցի պարիսպ | 2012 | 15 | | 0 | 0 |
| 11 | Ներհամայնքային ճանապարհ | 2014 | 16 | | 0 | 0 |
| 12 | Ներհամայնքային ճանապարհ | 2016 | 17 | | 0 | 0 |
| 13 | Ներհամայնքային ճանապարհ | 2018 | 18 | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 14 | Ներհամայնքային ճանապարհ | 2019 | 19 | | 0 | 0 |
| | Փոխանցող հարմարանքներ | | | | | |
| 15 | Օդային էլ. Գիծ | | 1 | | 0 | 0 |
| 16 | Բարձր լարման էլ. Գիծ | | 2 | | 0 | 0 |
| 17 | Ցածր լարման էլ. Գիծ | | 3 | | 0 | 0 |
| 18 | Ֆիլտրային հորեր | | 4 | | 0 | 0 |
| 19 | Արտաքին լուսավորություն | 2011 | 6 | | 0 | 0 |
| 20 | Արտաքին լուսավորություն | 2019 | 7 | | 0 | 0 |
| 21 | Արտաքին լուսավորություն | 2020 | 8 | | 0 | 0 |
| | Կահույք | | | | | |
| 22 | Գրապահարան | | 2 | | 0 | 0 |
| 23 | Գրապահարան 5 դարակ | | 3 | | 0 | 0 |
| 24 | Ցուցատախտակ | | 4 | | 0 | 0 |
| 25 | Գրասեղան | | 5 | | 0 | 0 |
| 26 | Սեղան դիմադիր | | 6 | | 0 | 0 |
| 27 | Հեռախոսի տակդիր | | 7 | | 0 | 0 |
| 28 | Աթոռ փափուկ | | 9 | | 0 | 0 |
| 29 | Խորհրդակցության սեղան | | 8 | | 0 | 0 |
| 30 | Համակարգչի սեղան | | 10 | | 0 | 0 |
| 31 | Չհրկիզվող պահարան | | 1 | | 0 | 0 |
| 32 | Գրասեղան 1.2 | | 14 | | 0 | 0 |
| 33 | Գրասեղան 1.1 | | 15 | | 0 | 0 |
| 34 | Աթոռ պտտվող | | 11 | | 0 | 0 |
| 35 | Հեռուստացույցի կանգնակ | | 12 | | 0 | 0 |
| 36 | Հատակի ծածկոց | | 13 | | 0 | 0 |
| 37 | Գրասեղան | | 16 | | 0 | 0 |
| 38 | Գրապահարան | | 17 | | 0 | 0 |
| | Համակարգչային տեխնիկա | | | | | |
| 39 | Համակարգիչ | | 1 | | 0 | 0 |
| 40 | Համակարգիչ Qore 2Q8400 | | 3 | | 0 | 0 |
| 41 | Համակարգիչ Intel DC5700 | | 6 | | 0 | 0 |
| 42 | Համակարգիչ Intel Core I32100 | | 7 | | 0 | 0 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 43 | Համակարգիչ DC 5700 | | | 9 | | 0 | 0 |
| 44 | Մոնիտոր | | | 12 | 3128C292-8A2341 | 0 | 0 |
| 45 | Մոնիտոր Samsung | | | 13 | 3103C596-0397 | 0 | 0 |
| 46 | Մոնիտոր Samsung B2030 | | | 14 | Q138B896-7A0502 | 0 | 0 |
| 47 | Մոնիտոր samsung 20A300 | | | 5 | | 0 | 0 |
| 48 | Մոնիտոր LG 20 | | | 8 | | 0 | 0 |
| 49 | Մոնիտոր ASUS 22VP228DE | | | 2 | | 0 | 0 |
| 50 | Xerox faser3117 | | | 10 | LS20PUZKFV/XT | 0 | 0 |
| 51 | Տպիչ սարք Canon 4010 | | | 15 | ZSKBH9LBB06350 | 0 | 0 |
| 52 | Պրինտեր Xerox 3100 MFP /S | | | 4 | | 0 | 0 |
| 53 | Պրինտեր Canon MF3010 | | | 9 | | 0 | 0 |
| 54 | Տպիչ Canon MF232W | | | 16 | 2807622091 | 0 | 0 |
| 55 | Ցանցային կոնցենտրատոր TPLINK | | | | 5252BOO4WCY45494 | 0 | 0 |
| 56 | Անխափան սնուցման սարք 650VA | | | 17 | TL-WR740N/TL-WR741ND | 0 | 0 |
| 57 | Անխափան սնուցման սարք 850VA | | | 20 | | 0 | 0 |
| 58 | Անխափան սնուցման սարք 850VA | | | 21 | | 0 | 0 |
| 59 | Անխափան սնուցման սարք 850VA | | | 22 | | 0 | 0 |
| 60 | Հեռուստացույց | | | 23 | 150514E0850N00975 | 0 | 0 |
| 61 | Տեսահսկման համակարգ | | 2015 | 24 | MBM64176659 (1504-REVOO-FX) | 0 | 0 |
| 62 | Համակարգիչ | | 2019 | 25 | E15469 | 0 | 0 |
| 63 | Մոնիտոր | | | 26 | 001NTWGB7713 | 0 | 0 |
| 64 | Բարձրախոս | | | 27 | UG1905131448 | 0 | 0 |
| 65 | Համակարգիչ | | | 28 | | 0 | 0 |
| 66 | Անխափան սնուցման սարք 1500VA | | | 29 | | 0 | 0 |
| 67 | Անխափան սնուցման սարք 650VA | | | 30 | | 0 | 0 |
| 68 | Տեսահսկման համակարգ | | | 31 | | 0 | 0 |
| | Այլ հիմնական միջոցներ | | | | | | |
| 69 | Էլ Տաքացուցիչ | | | 2 | | 0 | 0 |
| 70 | Էլ Տաքացուցիչ | | | 3 | | 0 | 0 |
| 71 | Կախիչ LEOSTER | | | 4 | MBM64176659 (1504-REVOO-FX) | 0 | 0 |
| 72 | Էլ Տաքացուցիչ 2000W | | | 5 | | 0 | 0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 73 | Էլ տաքացուցիչ SAACHI NLON1715 | | 6 | 26453 | 0 | 0 |
| 74 | Գոտեվորման սխեմա | | 1 | | 0 | 0 |
| 75 | Պարզեցված գլխավոր հատակագիծ | | 6 | | 0 | 0 |
| 76 | Տոնածառ | | 7 | | 0 | 0 |
| 77 | Հոսանքի կարգավորիչ 20000W | | 8 | 85L17 GB/T7676-98 | 0 | 0 |
| 78 | Հոսանքի կարգավորիչ 7500W | | 9 | | 0 | 0 |
| 79 | Օդակարգավորիչ | | 10 | 28935 | 0 | 0 |
| 80 | ՇՉԱԿ C-40C | 2020 | 11 | 2022 | 0 | 0 |
| 81 | Ճանապարհային նշաններ | 2020 | 12 | | 0 | 0 |
| | Տրանսպորտային սարքավորումներ | | | | | |
| 82 | HUNDAI ACCENT 1.4 A/T | 2017 | 1 | Z94K241BBJR032670 | 0 | 0 |
| | | | | Ընդամենը | 0 | 0 |

**Գլխավոր հաշվապահ** ______________ Տ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(ստորագրություն)

Գույքագրման արդյունքների հետ ծանոթացել ենք՝ նյութական պատասխանատու անձինք

Աշխատակազմի քարտուղար ______________ Ա. ՉԱՔԱՐՅԱՆ
(ստորագրություն)

Առաջատար մասնագետ ______________ Տ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(ստորագրություն)

Առաջին կարգի մասնագետ՝ ______________ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
(ստորագրություն)

Առաջին կարգի մասնագետ՝ ______________ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
(ստորագրություն)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

12 հուլիսի 2021 թվականի N 36-Ա

### ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի 7-6-1՝ առողջապահություն (այլ դասերին չպատկանող) ծրագրի 4657՝ այլ կապիտալ դրամաշնորհներ հոդվածից 200.0 /երկու հարյուր հազար/ դրամ գումար հատկացնել «Նոր Հաճընի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերությանը՝ նոր անալիզատորներ ձեռք բերելու նպատակով:

**Կողմ -5** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՂԱՍԻ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻՔ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հուլիսի 2021 թվականի N 37-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 47-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2020 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 47-Ն որոշման հավելվածում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0**

1. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՂԱՍԻ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻԿ
5. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ'
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի N 37-Ն ՈՐՈՇՄԱՆ

| ՏՈՂԻ NN | *ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ* | | | | Հոդվածը | Նախնական /հազար դրամ/ | Փոփոխությունը + / - | Վերջնական /հազար դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| *1139* | *գ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար* | | | | 71452 | 0.0 | 116.0 | 116.0 |
| 1352 | *Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ* | | | | 7422 | 0.0 | +792.7 | 792.7 |
| ՏՈՂԻ NN | Բաժին | Խումբ | Դաս | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Հոդվածը | Նախնական /հազար դրամ/ | Փոփոխու-թյունը + / - | Վերջնական /հազար դրամ/ |
| 2111 | 1 | 1 | 1 | Տեղեկատվական ծառայություններ | 4234 | 100.0 | +50.0 | 150.0 |
| | | | | Կառավարչական ծառայություններ | 4235 | 1100.0 | +620.0 | 1720.0 |
| 2161 | 1 | 6 | 1 | Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | 15000.0 | +1500.0 | 16500.0 |
| | | | | նախագծահետազոտական ծախսեր | 5134 | +1000.0 | +600.0 | 1600.0 |
| 2451 | 4 | 5 | 1 | Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | 1000.0 | +100.0 | 1100.0 |
| 2762 | 7 | 6 | 2 | Այլ կապիտալ դրամաշնորհներ | 4257 | 0.0 | +200.0 | 200.0 |
| 2911 | 9 | 1 | 1 | Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | 500 0.0 | +500.0 | 5500.0 |
| 3112 | 11 | 1 | 2 | Համայնքների պահուստային ֆոնդ / Վարչական բյուջե/ | 4891 | 72.7 | +38.7 | 111.4 |
| 3112 | 11 | 1 | 2 | Համայնքների պահուստային ֆոնդ / ֆոնդային բյուջե / | 4891 | 152358.9 | -2700,0 | 149658.9 |